ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

4 դեկտեմբերի 2014թ. թիվ 452-Ա

ՍՏԵՓԱՆ ՎԱՐՈՍՅԱՆԻՆ «ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՓԲԸ-Ի ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին կետով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.17 կետի «ա» ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի N 992-Ն որոշմամբ հաստատված կարգի 71-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետարանի ենթակայության տակ գտնվող հարյուր տոկոս պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող «Թումանյանի առողջության կենտրոն» ՊՓԲԸ-ի տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ 5 որոշումը, հաշվի առնելով Ս.Վարոսյանի դիմումը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Ստեփան Արտեմի Վարոսյանին նշանակել «Թումանյանի առողջության կենտրոն» ՊՓԲԸ-ի տնօրեն և նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով 2014 թվականի դեկտեմբերի 4-ից:

2. Ս.Վարոսյանի վարձատրության չափը սահմանել համաձայն պայմանագրի:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2014թ. դեկտեմբերի 4
ք.Վանաձոր